

ՀԱՄՈ ԿԱՐԵՆԻ
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու., դոցենտ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող
E-mail: hamosukiasyan@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.2.65-47

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 8.1.2024 թ.,
ընդունվել է տպագրության՝ 10.1.2024 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.1.2024 թ.

ՌԻՇԱԳՐԱՎ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Անվանում

Բնակչության շրջանում կոմունիստական գաղափարախոսությունն արմատավորելու նպատակով 1920-ական թվականների սկզբից Խորհրդային Հայաստանում չէին խրախուսվում հոգևոր-կրոնական բովանդակությամբ ստեղծագործությունների կատարումները: Ասվածը վերաբերում էր նաև անվանի ստեղծագործողների թողած ժառանգությանը: Երգահան Ռոմանոս Մելիքյանն առանձնահատուկ ակնածանք է ունեցել կոմպոզիտոր Մակար Եկմալյանի նկատմամբ և գործուն քայլեր է ձեռնարկել նրա ձեռագրերը հավաքելու, ուսումնասիրելու, երաժշտական ժառանգությունը հանրայնացնելու նպատակով: Իբրև Կոնսերվատորիայի վարիչ՝ 1924 թ. հունվար փետրվարին նա ձեռնամուխ եղավ Եկմալյանին նվիրված համերգ-երեկոյի կազմակերպմանը: Այդ աշխատանքները կատարելու համար Լուսավորության ժողովրդական կոմիսարիատից թույլտվություն ստանալով հանդերձ, նա, զգուշավորություն հանդես բերելով, նույն հարցով դիմում է նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին: Այս քայլն արժանանում է լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի կոշտ արձագանքին: Նա Ռ. Մելիքյանին արգելում է առանց Լուսժողկոմատի թույլտվության կոնսերվատորիայի անունից դիմել խորհրդային և կուսակցական բարձրագույն մարմիններին: Այս ամենից ազդվելով՝ 1924 թ. հուլիսի 21-ին Ռ. Մելիքյանը Կոնսերվատորիայի վարիչի պաշտոնից ազատվելու դիմում է ներկայացնում: **Բանալի բաներ.** Ռոմանոս Մելիքյան, Մակար Եկմալյան, Ասքանազ Մռավյան, կոնսերվատորիա, երաժշտություն, կոմպոզիտոր, երաժշտական ժառանգություն, համերգ:

Abstract

PhD in History, Associate Professor, Institute of History of the NAS RA, Senior Researcher Hamo Karen Sukiasyan. - "Significant Details from the biography of Romanos Melikyan".
From the early 1920s onwards, the performance of works with spiritual and religious themes was discouraged in Soviet Armenia as part of a broader effort to instill communist ideology among the populace. This policy extended even to the musical legacy of prominent composers. Romanos Melikyan, a composer and the head of the Conservatory at the time, had a deep admiration for the work of Makar Yekmalyan and took active measures to collect, study, and promote his musical legacy. In January-February 1924, while serving as the Conservatory's head, Melikyan initiated the organization of a concert evening dedicated to Yekmalyan's compositions. Having obtained preliminary permission from the People's Commissariat of Enlightenment (Narkompros) for the event, he proceeded, out of prudence, to seek formal approval from the Central Committee of the Communist Party of Armenia. This action, however, provoked a stern response from the Narkompros Askanaz Mravyan, who reprimanded Melikyan for approaching the higher Soviet and Party authorities on behalf of the Conservatory without first securing permission from the People's Commissariat of Enlightenment. Disheartened by the severity of the reprimand, Romanos Melikyan submitted his resignation from the position of head of the Conservatory on 21 July 1924.

Key Words: Romanos Melikyan, Makar Ekmalyan, Askanaz Mravyan, conservatory, music, composer, musical heritage, concert.

Абстракт

Кандидат исторических наук, доцент, Институт истории НАН РА, старший научный сотрудник Амо Каренович Сукиасян. - "Существенные подробности биографии Романоса Меликяна".
С начала 1920-х годов в Советской Армении не поощрялось исполнение произведений на духовные и религиозные темы в рамках более широких усилий по внедрению коммунистической идеологии среди населения. Эта политика распространялась даже на музыкальное наследие выдающихся композиторов. Романос Меликян, композитор и руководитель консерватории в то время, глубоко восхищался творчеством Макара Екмаляна и принимал активные меры по сбору, изучению и пропаганде его музыкального наследия. В январе-феврале 1924 года, будучи руководителем консерватории, Меликян инициировал организацию концертного вечера, посвященного сочинениям Ек-

ՓՈՍՏԱՍԿՎԻՏՈՒՄ ԵՎ ԳՐԱԳՐՈՒՄ - պատմական վերլուծություն

Նվիրվում է Ռ.Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

маляна. Получив предварительное разрешение от Народного комиссариата просвещения на это мероприятие, он из осторожности обратился за официальным одобрением в Центральный комитет Коммунистической партии Ар-мении. Однако эта акция вызвала суровую реакцию Наркомпроса Асканаз Мравяна, который вынес Меликяну вы-говор за обращение в высшие советские и партийные органы от имени консерватории без предварительного раз-решения Наркомпроса. Затронутый всем этим, Романос Меликян 21 июля 1924 года подал в отставку с поста за-ведующего консерваторией.

Ключевые слова: Романос Меликян, Макар Екмалян, Асканаз Мравян, консерватория, музыка, композитор, музыкальное наследие, концерт.

ՓՄՍՍՍՍՎՍՎԵՐԳՐՈՒՄԻՆ - պատմական վերլուծություն

Հայաստանի խորհրդայնացումից հետո քաղաքական հսկողություն ու գրաքննություն հաստատվեց մամուլի, գրականության և արվեստի բնագավառների նկատմամբ: Բացառություն չկազմեց նաև երաժշտական արվեստը: Նախ պետականացվեցին մշակութային հաստատությունները, երաժշտական գործիքները, այնուհետև սկսվեց սահմանափակվել ինչպես իրենց առաջին քայլերը կատարող, այնպես էլ ճանաչված երաժիշտների ազատ ստեղծագործական և կազմակերպչական գործունեությունը (1.):

Բնակչության լայն խավերի շրջանում կոմունիստական գաղափարախոսության արմատավորման տեսակետից Խորհրդային Հայաստանում առանձնապես անընդունելի էին դիտվում XIX դարի վերջին քառորդի և XX դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարը, Արևմտյան Հայաստանը, նրա ազատության համար պայքարող ֆիդայիներին, դաշնակցական խմբապետներին ու Հայաստանի Հանրապետությունը հիշեցնող, ինչպես նաև հոգևոր-կրոնական բովանդակությամբ ստեղծագործությունները: Հենց այս վերջին տեսակի վերաբերյալ է ներկա ակնարկը:

Հոգևոր երգ-երաժշտության կատարումները խրախուսելի չլինելու պատճառով համերգների կազմակերպիչները ստիպված էին զգուշավոր, չափազանց աչալուրջ գտնվել՝ ծրագրերում այդ բնույթի ստեղծագործություններ ներառելու դեպքում ակամա հարվածի տակ չընկնելու և կուսակցական-պետական մարմինների ավելորդ «ուշադրությանը» չարժանանալու նպատակով: Ասվածի հաստատումն է Երևանի պետական կոնսերվատորիայի վարիչ (վերատեսուչ) լինելու վերջին ժամանակահատվածում կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանին (1883–1935 թթ.) առնչված հարցը:

Ռոմանոս Մելիքյանն առանձնահատուկ գնահատանք, հարգանք ու ակնածանք է ունեցել կոմպոզիտոր Մակար Եկմալյանի (1856–1905 թթ.) նկատմամբ և գործուն քայլեր է ձեռնարկել նրա ձեռագրերը հավաքելու, ուսումնասիրելու, երաժշտական ժառանգությունը հանրայնացնելու նպատակով: Ասվածի հաստատումներից է Մ. Եկմալյանի մահվան տասնամյակի առթիվ 1915 թ. մարտի 6-ին նրա գրած հոդվածը, որտեղ իր սրտի խոսքն է արտահայտում «փոքր ազգի մեծ զավակի» մասին (2.): Խորհրդային տարիներին, երբ իշխանությունների կողմից քննադատվում, քարկոծվում և արգելվում էր հայ հոգևոր-կրոնական պատկառազորու ժառանգությունը, Ռ. Մելիքյանը չփոխեց Մ. Եկմալյանի ստեղծագործությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքը: 1923 թ. հուլիսի 4-ին լուսավորության ժողովում Ասքանազ Մոսավյանին գրած նամակում նա շեշտում է, որ սեփական նախաձեռնությամբ

տարիներ շարունակ նվիրվել է «մեծ ուսուցչի» ցիրուցան ձեռագրերը հավաքելու, կարգի բերելու ու մանրամասն ցուցակագրելու գործին (3.): Ի դեպ, 1928 թ. ապրիլի 20-ին երաժշտագետ Մուշեղ Աղայանին գրած նամակում էլ նա Եկմալյանին անվանում է հայ գեղարվեստական երաժշտության հիմնադիրը (4.): Ավելին, Եկմալյանի գործերը (այդ թվում՝ հոգևոր-կրոնական ուղղվածության) հանրայնացնելու առիթը բաց չէր թողնում՝ գիտակցելով, որ դա կուսակցական-պետական մարմինների կողմից ամենին չի խրախուսվում: Այս դեպքում մեծ հաջողություն կարող էր լինել անհաղթահարելի խոչընդոտների չհանդիպելը:

Ռ. Մելիքյանի ղեկավարությամբ 1924 թ. փետրվարին Կոնսերվատորիան ձեռնամուխ էր եղել Մակար Եկմալյանի աշխատասիրություններին նվիրված համերգ-երեկոյի կազմակերպմանը: Այս հարցում Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովուրդի թույլտվություն ստանալուց հետո Ռ. Մելիքյանը, ավելորդ զգուշավորություն ցուցաբերելով, չբավականացավ միայն դրանով: 1924 թ. հունվարի 28-ին նա դիմեց նաև ՀԿ(Բ)Կ կենտկոմին՝ ցանկանալով նախօրոք իմանալ կոմիտեի կարծիքը համերգին Մ. Եկմալյանի հոգևոր բնույթի երաժշտական ստեղծագործություններից («Մուրբ-սուրբ», «Հայր մեր», «Գոհանամք» և այլն) հատվածներ կատարելու վերաբերյալ: Հաջորդիվ կատարված արձագանքներն անսպասելի էին Ռ. Մելիքյանի համար: Նրա նամակը ՀԿ(Բ)Կ կենտկոմի ազդեցության և պրոպագանդայի բաժնի վարիչ Ալեքսանդր Շահումյանյանը հունվարի 30-ին մակագրությամբ ուղարկեց լուսժողովում Ա. Մոսավյանին՝ իր հայեցողությամբ հարցը տնօրինելու համար (5.):

Չափազանց կտրուկ և կոշտ էր Ա. Մոսավյանի արձագանքը: Նա փետրվարի 1-ին Ռ. Մելիքյանից պահանջեց բացատրություն ներկայացնել, թե ինչու է դիմել Կոմկոմի կենտկոմին ընդգծելով. «Քանի որ այդ խնդիրը ես արդեն լուծել էի» (6.): Հաջորդ օրը՝ փետրվարի 2-ին, լուսժողովում անհրաժեշտ էր բացատրությունում Ռ. Մելիքյանը հայտնում էր, որ ժողկոմի թույլտվությունն ունենալով հանդերձ, հաշվի առնելով, որ համերգն ունենալու է ոչ թե հիմնարկային, այլ հրապարակային-հասարակական բնույթ, ցանկացել է իմանալ նաև «Կենտկոմի հեղինակավոր կարծիքը միայն այս հարցի վերաբերմամբ» (7.): Չբավարարվելով այս պարզաբանմամբ՝ Մոսավյանը բացատրագրի վրա նույն օրը մակագրել է. «Հայտնել ի գիտություն ընկ. Ռ. Մելիքյանին, որ նա պարտավոր է իմանալ հետևյալը. Լուսժողովուրդը քաղաքական աշխատանք է կատարում և ոչ միայն լոկ հիմնարկային, և խստիվ կերպով արգելել նրան առանց Լուսժողովուրդի թույլտվության հարաբերության մեջ մտնել խորհրդային և կուսակցական բարձր մարմինների հետ կոնսերվատորիայի անունից» (8.):

Նվիրվում է Ռ.Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

Փաստորեն, երաժշտական-ստեղծագործական աշխատանքները մի կողմ թողած և Հայաստանի բարձրագույն երաժշտական կրթօջախի կազմակերպմանն ու կայացմանն անմնացորդ նվիրված Գոնսերվատորիայի հիմնադիր-վարիչը հաշվի չէր առել (կամ չգիտեր), որ միևնույն պերտաճած պետական-կուսակցական համակարգում քաղաքական վերահսկողության բնագավառում յուրաքանչյուր մարմին իր հստակ լիազորություններն ուներ:

Նման փոքր խնդիրները պղտորում էին Ռ. Մելիքյանի հոգին, խանգարում ստեղծագործական-կազմակերպչական աշխատանքներին, թուլացնում եռանդը, քայքայում առողջությունը: Ահա այս պայմաններում է, որ նա որոշում կայացրեց հրաժարական ներկայացնել Գոնսերվատորիայի վարիչի պաշտոնից՝ առողջությունը կազդուրելու, և երաժշտական-ստեղծագործական աշխատանքներով զբաղվելու նպատակով: Հուլիսի 21-ին լուսժողկուստի արհեստագիտական լուսավորության գլխավոր վարչության պետ Սարգիս Աբովյանին ուղղված դիմումում Ռ. Մելիքյանը խնդրում էր իրեն ազատել զբաղեցրած պաշտոնից՝ շեշտելով, թե «37 ամսվա ընթացքում, առանց հանգստի և արձակուրդի նման աշխատանքներ տանելուց հետո, կարծում եմ, կարող եմ լինել ազատ և զբաղվել իմ մասնագիտությամբ»: Ռ. Մելիքյանի հրաժարականի հարցը երկրորդային խնդիր չէր, ուստի Ս. Աբովյանը որոշեց դիմումին առժամանակ ընթացք չտալ՝ հուլիսի 23-ին մակագրելով. «Հրաժարականի հարցի որոշումը թողնել մինչև ընկ. Մոսկվայի վերադարձը» (9.): Գոնսերվատորիայի վարիչի պաշտոնում հոկտեմբերի 1-ին Ռ. Մելիքյանին փոխարինեց երաժշտագետ Արշակ Ադամյանը (10.):

Վարիչի պաշտոնից հրաժարվելուց հետո Ռ. Մելիքյանը տեղափոխվում է Թիֆլիս, սակայն մինչև 1925 թ. սեպտեմբերի 25-ը Գոնսերվատորիայում պաշտոնավարում է որպես դասատու (11.): Ապա տեղափոխվում է Լեոնային Ղարաբաղ, ուր հիմնադրում է Ստեփանակերտի երաժշտական տեխնիկումը: 1925–1926 ուսումնական տարին Ստեփանակերտում անցկացնելուց հետո նա վերադառնում է Թիֆլիս, իսկ 1927 թ. Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողկուստի հրավերով կրկին գալիս է Երևան՝ շարունակելով ակնառու ներդրում ունենալ Խորհրդային Հայաստանի երաժշտական կյանքի կազմակերպման գործում, հեղինակում բազմաթիվ նոր ստեղծագործություններ: Նրա կյանքի թելը կտրվել է 1935 թ. մարտի 30-ին, Թիֆլիսում (12.):

Հայկական երաժշտական արվեստին իր անսահման նվիրումի համար Ռոմանոս Մելիքյանը վայելել է ժամանակակիցների սերը, հարգանքն ու ակնածանքը: Բռուն ստեղծագործական և կազմակերպչական կարճատև կյանքի ընթացքում նա թողել է ոչ մեծածավալ, սակայն արժեքավոր ժառանգություն, որն այսօր էլ հիացնում է ունկնդրին:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը հետաքրքիր մանրամասներ են բացահայտում Ռոմանոս Մելիքյանի գործունեության վերաբերյալ և կարող են օգտակար լինել հայ երաժշտության պատմությանը զբաղվող մասնագետների համար: Դրանք բոլորն էլ բնագրեր են և պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը հետաքրքիր մանրամասներ են բացահայտում Ռոմանոս Մելիքյանի գործունեության վերաբերյալ և կարող են օգտակար չի նեց հայ երաժշտության պատմությանը զբաղվող մասնագետների համար: Դրանք բոլորն էլ բնագրեր են և պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

N 1

Գոնսերվատորիայի վարիչի գրությունը ՀԿ(բ)Կ կենտկոմին՝ Մ. Եկմայանին նվիրված համերգ կազմակերպելու հարցով

28 հունվարի 1924 թ.

N 18

Երևան

Հիմնարկս մտադրություն ունի առաջիկայում կազմակերպել համերգ-երեկո՝ նվիրված երաժշտագետ Մակար Եկմայանի աշխատասիրություններին: Ծրագրի մեջ տեղ պետք է ունենան հեղինակի նաև հոգևոր երաժշտությունից մի քանի հատվածներ, ինչպես՝ «Սուրբ-սուրբ», «Հայր մեր», «Գոհանամք» և այլն: Մրանով կցանկանայինք նախօրոք իմանալ կոմիտեիդ կարծիքը:

Գոնսերվատորիայի վերատեսուչ՝ Ռ. Մելիքյան

Մակագրություն 1. «Агитотдел (ստորագրություն)»:

Մակագրություն 2. «Тов. Мравьяну, на усмотрение и распоряжение, А. Шахсуварян, 29/1»:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2a), գ. 3, թ. 19: Բնագիր: Ձեռագիր:

N 2

ՀԿ(բ)Կ կենտկոմի գործերի կառավարչության գրությունը լուսժողկոմ Ա. Մոսկվայանին՝ կոնսերվատորիայի վարիչի դիմումն ուղարկելու մասին

30 հունվարի 1924 թ.

N 9226

Երևան

При сем препровождается отношение Консерватории за N 18 с резолюцией секретаря ЦК тов. [А.] Шахсуваряна: «На усмотрение и распоряжение».

Вред управделами ЦК Аргутинский

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2a), գ. 3, թ. 20: Բնագիր: Մեքենագիր:

ՓԱՍՏԱՎԻԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ - պատմական վերլուծություն

Նվիրվում է Ռ.Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

N 3

N 5

Լուսժողկոմ Ա. Մռավյանի գրությունը կոնսերվատորիայի վարիչ Ռ. Մելիքյանին՝ ՀԿ(Բ)Կ կենտկոմին դիմելու հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու մասին

Կոնսերվատորիայի վարիչ Ռ. Մելիքյանի դիմումը արհիւսագլխավար Ս. Աբովյանին զբաղեցրած պաշտոնից հրաժարվելու մասին (14.)

21 հուլիսի 1924 թ.
N 98
Երևան

1 փետրվարի 1924 թ.
N 645
Երևան

Բացատրություն տալ ինչո՞ւ էիք դիմել Կոմկուսի կենտկոմին Ս. Եկմայանի համերգի առթիվ, քանի որ այդ խնդիրը ես արդեն լուծել էի:

Երկրի երաժշտական կուլտուրայի բնագավառում երեք տարվա իմ գործունեությունս առանձնապես կենտրոնացած է եղել տեխնիկական-կազմակերպչական աշխատանքների վրա:

Լուսժողկոմ՝ Ա. Մռավյան

Ճիշտ է՝ առայժմ այսպիսի աշխատանքներով է գուցե պայմանավորվում մեր երկրի երաժշտական կուլտուրան, սակայն 37 ամսվա ընթացքում, առանց հանգրսուի և արձակուրդի նման աշխատանքներ տանելուց հետո, կարծում եմ, կարող եմ լինել ազատ և զբաղվել իմ մասնագիտությամբ:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2a), գ. 3, թ. 27: Բնագիր: Ձեռագիր:

Սրա համար էլ խնդրում եմ ընդունեք հրաժարականս և ազատ համարեիք ինձ վերատեսչի պաշտոնից:

N 4

Կոնսերվատորիայի վարիչ Ռ. Մելիքյանի պարզաբանող գրությունը լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ Ս. Եկմայանին նվիրված համերգի առթիվ ՀԿ(Բ)Կ կենտկոմին դիմելու հարցի առթիվ

Կոնսերվատորիայի վերատեսուչ՝ Ռ. Մելիքյան

2 փետրվարի 1924 թ.
N 22
Երևան

Մակագրություն 1. «Հրաժարականի հարցի որոշումը թողնել մինչև ընկ. Մռավյանի վերադարձը: Ս. Աբովյան, 23.07.»:

Ձեր N 645 գրությամբ հարցումին պատասխանում եմ.

Ս. Եկմայանին նվիրված գալիք համերգի թույլտվությամբ ես չեմ զբաղվում, քանի որ այս առթիվ ունեմ լուսժողկոմի և՛ առաջարկը, և՛ թույլտվությունը: Ի նկատի ունենալով, որ Ս. Եկմայանին նվիրված համերգը կրելու է հրապարակային հասարակական բնույթ (և ոչ թե մեր հիմնարկի սոսկ ներքին աշխատանք) կարիք եմ զգացել իմանալու և ՀՍԽՀ կոմկուսի կենտկոմի (13.) հեղինակավոր կարծիքը միայն այս հարցի վերաբերմամբ:

Մակագրություն 2. «Մակագրությունը հայտնված է ընկ. Մելիքյանին: (Ստորագրություն), 25.07.»:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 624, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

Կոնսերվատորիայի վերատեսուչ՝ Ռ. Մելիքյան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մակագրություն. «Հայտնել ի զիտություն ընկ. Ռ. Մելիքյանին, որ նա պարտավոր է իմանալ հետևյալը. Լուսժողկոմատը քաղաքական աշխատանք է կատարում և ոչ միայն լոկ հիմնարկային, և խստիվ կերպով արգելել նրան առանց Լուսժողկոմատի թույլտվության հարաբերության մեջ մտնել խորհրդային և կուսակցական բարձր մարմինների հետ կոնսերվատորիայի անունից: Ա. Մռավյան, 2/2»:

1. Սուքիասյան Հ., Արվեստի զրաքննության սկզբնավորումը Խորհրդային Հայաստանում (1920–1923 թթ.), «Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք», 2023, N 2:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2a), գ. 3, թ. 26: Բնագիր: Մեքենագիր:

- 2. //Թատրոն և երաժշտություն, Բաբու, 1915, N 6-7, էջ 78-81:
- 3. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 122, ց. 1, գ. 691, թ. 8:
- 4. Մելիքյան Ռոմանոս, Հոդվածներ, նամակներ, հուշեր, Եր., 1977, էջ 59:
- 5. ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2a), գ. 3, թ. 19-20:
- 6. ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2a), գ. 3, թ. 27:
- 7. ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2a), գ. 3, թ. 26:
- 8. Նույն տեղում:
- 9. ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 624, թ. 1, գ. 623, թ. 56:
- 10. ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 922, թ. 13:
- 11. Նույն տեղում:
- 12. Գյոդակյան Գ. Շ., Ռոմանոս Մելիքյան. կյանքը և ստեղծագործությունը, Եր., 1960, էջ 195-225:
- 13. Մխալ է: Պետք է լինի՝ «Հայաստանի կոմկուսի կենտկոմ» կամ «ՀԿ(Բ)Կ կենտկոմ»:
- 14. Դիմումի պատճենը Ռ. Մելիքյանն ուղարկել է լուսժողկոմ Ա. Մռավյանին (ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 623, թ. 56: Բնագիր: Ձեռագիր):

ՓՄԱՍՏԱՎԱԿԵՐԱԳՈՐԾՅԱԾՈՒՆ - պատմական վերլուծություն

Նվիրվում է Ռ.Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

Sukiasyan H., "The Beginnings of Art Censorship in Soviet Armenia (1920-1923)", Yearbook of the Academy of Fine Arts, 2023, No. 2.

Theater and Music, Baku, 1915, Nos. 6-7, pp. 78-81.

National Archives of Armenia (NAA), Fund 122, List 1, File 691, p. 8.

Melikyan Romanos, Articles, Letters, Memoirs, Yerevan, 1977, p. 59.

NAA, Fund 122, List 3 (2a), File 3, pp. 19-20.

NAA, Fund 122, List 3 (2a), File 3, p. 27.

NAA, Fund 122, List 3 (2a), File 3, p. 26.

Rid.

NAA, Fund 122, List 1, Files 624, p. 1, 623, p. 56.

NAA, Fund 122, List 1, File 922, p. 13.

Rid.

Gyodakyan G. Sh., Romanos Melikyan: Life and Work, Yerevan, 1960, pp. 195-225.

Correction: It should be "Central Committee of the Communist Party of Armenia" or "Central Committee of AC(b)P".

A copy of the application sent by R. Melikyan to People's Commissar of Education A. Mravyan (NAA, Fund 122, List 1, File 623, p. 56. Original. Handwritten).

REFERENCES

1. Sukiasyan H., Arvesti graknnuthyan skzbnavorum Khorhrdayin Hayastanum (1920-1923), Yearbook of the Academy of Fine Arts, 2023, No. 2.
2. Theater and Music, Baku, 1915, Nos. 6-7, pp. 78-81.
3. National Archives of Armenia (NAA), Fund 122, List 1, File 691, p. 8.
4. Melikyan Romanos, Articles, Letters, Memoirs, Yerevan, 1977 p. 59.
5. HAA, Fund 122, List 3 (2a), File 3, pp. 19-20.
6. HAA, Fund 122, List 3 (2a), File 3, p. 27.
7. HAA, Fund 122, List 3 (2a), File 3, p. 26.
8. Nuyn teghum.
9. HAA, Fund 122, List 1, Files 624, p. 1, 623, p. 56.
10. HAA, Fund 122, List 1, File 922, p. 13.
11. Nuyn teghum.
12. Gyodakyan G. Sh., Romanos Melikyan: Life and Work, Yerevan, 1960, pp. 195-225.
13. Correction: It should be "Central Committee of the Communist Party of Armenia" or "Central Committee of AC(b)P".
14. A copy of the application sent by R. Melikyan to People's Commissar of Education A. Mravyan (NAA, Fund 122, List 1, File 623, p. 56. Original. Handwritten).

Հեղինակի մասին. ՀԱՍՈ ԿԱՏԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ պատմական գիտությունների թեկնածու է (2010 թ.): Նա ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող է, Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի դոցենտ: 2010 թ. սեպտեմբերից որպես դասախոս աշխատել է Հայաստանի մի շարք բուհերում: Նրա մասնագիտական հետաքրքրությունները ներառում են XIX-XX դարերի պատմությունը, այդ թվում՝ Հայաստանի Առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի պատմությունը, աղբյուրագիտությունը, պատմագրությունը, պետական կառավարման մարմինների գործունեությունը, տարածքային և սահմանային խնդիրները, գրատպության, մամուլի, գրաքննության, առօրյա կյանքի, քաղաքական մտքի, դիվանագիտության և հայագիտության պատմությունը: Հեղինակ է՝ 140 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 16 գրքի՝ նվիրված վերոնշյալ թեմաներին:

About the author: HAMO KAREN SUKIASYAN holds PhD in History (2010). He is an senior researcher at the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, associate professor of the Department of Social Sciences at the National Agrarian University of Armenia. Since September 2010 he has worked as a lecturer at a number of universities of the Armenia. His professional interests include the issues of the history of 19-20th century, including both the history of the First Republic of Armenia and Soviet Armenia, source studies, historiography, the activities of state administrative bodies, territorial and border issues, the history of typography, press, censorship, daily life, political thought, diplomacy and Armenian Studies. He is an author of 140 scientific works, including 16 books devoted to the aforementioned topics.

Об авторе: АМО КАРЕНОВИЧ СУКИАСЯН. Кандидат исторических наук (2010), старший научный сотрудник Института истории Национальной академии наук Республики Армения. Доцент кафедры социальных наук Национального аграрного университета Армении. Работал преподавателем в ряде университетов Армении (с сентября 2010). В круг его профессиональных интересов входят вопросы истории XIX-XX веков, в том числе истории Первой Республики Армения и Советской Армении, источниковедение, историография, деятельность органов государственного управления, территориальные и пограничные вопросы, история книгопечатания, пресса, цензура, повседневная жизнь, политическая мысль, дипломатия и арменоведение. Автор 140 научных работ, в том числе 16 книг, посвященных вышеуказанным темам.